Էդգար Աշոտի Թովմասյան

Ծնվել է 1989 թվականի հունվարի 2-ին Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում:

1996-2006 թթ. սովորել է Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

2007-2009 թթ. ծառայել է ՀՀ զիված ուժերում՝ զորացրվել սերժանտի կոչումով:

2012 թվականին ավարտել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2015 թվականին ավարտել է Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

25.11.2017թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

2013-2014թթ. աշխատել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2014-2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2018 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

Հայկազ Մուշեղի Գալստյան

Ծնվել է 1985թ.-ի փետրվարի 28-ին, Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում:

2002թ.-ին ավարտել է Արմավիրի մարզի, Նորակերտ համայնքի միջնակարգ դպրոցը:

2009թ.-ին ավարտել է ՀՀ Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2010թ.-ին ստացել է ՀՀ Հյուսիսային համալսարանի դիպլոմ՝ որով վերջինիս շնորհվել է իրավագետի որակավորում:

01.08.2011-01.08.2012թթ աշխատել է Ա/Ձ Անի Թորոսյան փաստաբանական գրասենյակում՝ որպես իրավախորհրդատու:

01.02.2013-21.01.2015թթ. աշխատել է «Լեգալ Իմպերիա» ՍՊԸ փաստաբանական գրասենյակում՝ որպես իրավաբան:

06.10.2013թ.-ից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

22.01.2015-07.10.2022թթ. աշխատել է ՀՀ ՓՊ հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

01.10.2022թ.-ից մինչ օրս աշխատում է «Հայկազ Գալստյան Մուշեղի» Ա/Ձ փաստաբանական գրասենյակում:

Լևոն Էդուարդի Պետրոսյան

Ծնվել է 1995թ.-ի սեպտեմբերի 22-ին, Երևան քաղաքում:

2013թ. ավարտել է Նոյեմբերյանի ավագ դպրոցը:

23.01.2014-25.01.2016թթ. ծառայել է ԼՂՀ ՊԲ-ում:

2019թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2021թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

02.09.2019-01.11.2019թթ. աշխատել է «Ֆըրսթ Լիգլ» ՍՊԸ-ում՝ որպես ավագ իրավախորհրդատու:

10.01.2020-20.08.2020թթ. աշխատել է Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունում՝ որպես փորձագետ:

25.09.2020-02.09.2022թթ. աշխատել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

09.07.2021թ.-ից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագրի գործողությունը կասեցված):

11.01.2023-02.03.2023թթ. ընկած ժամանակահատվածում «Լևոն Պետրոսյան Էդուարդի» Ա/Ձ-ով իրականացրել է փաստաբանական գործունեություն:

09.03.2023թ.-ից մինչ օրս զբաղեցնում է Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի օգնականի պաշտոնը:

Համահեղինակ է 2 գիտական հոդվածների:

Լիանա Տիգրանի Սանթրոսյան

Ծնվել է 1996թ.-ի հունվարի 31-ին Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում:

2013թ.-ին գերազանցությամբ ավարտել է Դիլիջանի ավագ դպրոցը:

2017թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2019թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

25.09.2017-12.03.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

24.01.2019-01.07.2022թթ. աշխատել է նախ՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում՝ որպես քննիչ, ապա՝ ավագ քննիչ:

11.10.2022-27.06.2023թթ. աշխատել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում՝ որպես ավագ քննիչ:

28.06.2023թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով քննիչ:

Լիանա Սանթրոսյանին շնորհվել է արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 19.10.2023թ. թիվ 1461-Ա հրամանով պարգևատրվել է «Համագործակցության համար» մեդալով:

Ամուսնացած չէ:

Գոռ Կամոյի Մարգարյան

Ծնվել է 1993 թվականի ապրիլի 5-ին Արարատի մարզի Մասիս համայնքում:

2010թ.-ին ավարտել է Մասիս գյուղի միջնակարգ դպրոցը:

2011-2013թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2017թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

24.05.2019թ-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

2019-2020թթ. աշխատել է «Ղազարյան ընդ փարթներս» գրասենյակում՝ որպես փաստաբան և Արտաշատ քաղաքի մասնաճյուղի տնօրեն:

2020-2021թթ. աշխատել է Հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

2021թ.-ից մինչ օրս զբաղվում է մասնավոր փաստաբանական գործունեությամբ:

Ամուսնացած է:

Սոնա Վարդանի Խալաֆյան

Ծնվել է 1983 թվականի սեպտեմբերի 25-ին Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում:

2000թ. ավարտել է Եղիշե Չարենցի անվան թիվ 67 միջնակարգ դպրոցը:

2004թ.ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2006թ.ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

08.11.2006թ-02.04.2007թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի կազմակերպական վարչությունում՝ որպես գործավար:

02.04.2007-01.01.2010թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի կազմակերպական վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ, այնուհետև՝ մասնագետ:

01.01.2010-05.10.2015թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի կազմակերպա-իրավական վարչությունում՝ որպես մասնագետ, այնուհետև՝ ավագ մասնագետ:

05.10.2015-01.11.2018թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի իրավական վերլուծության վարչությունում՝ որպես ՀՀ դատական իշխանության ինքնակառավարման մարմինների բաժնի ավագ մասնագետ:

01.11.2018-29.09.2022թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչությունում՝ որպես Դատավորների ընդհանուր ժողովի և հանձնաժողովների գործունեության ապահովման բաժնի պետ:

29.09.2022թ.-ից մինչ օրս աշխատում է Դատական դեպարտամենտի դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչությունում՝ որպես վարչության պետի պաշտոնակատար:

Ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները բարեխիղճ կատարելու համար Դատական դեպարտամենտի ղեկավարի 29.12.2015թ. թիվ 1011-Ա

հրամանի համաձայն՝ շնորհվել է զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր՝ ՀՀ դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

Մարտին Վահանի Գևորգյան

Ծնվել է 1980թ.-ի մարտի 8-ին, Երևան քաղաքում:

2000թ.-ին ավարտել է Երևանի Քըրք-Քըրքորյանի իրավաբանական ֆակուլտետը:

2001-2006թթ. անհատական կարգով սովորել և ավարտել է Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

2000-2001թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես առաքիչ:

26.11.2001-01.06.2006թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

02.06.2006-01.12.2020թթ. աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.12.2020-28.02.2023թթ. աշխատել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

28.02.2023թ.-ից մինչ օրս աշխատում է Դատական դեպարտամենտի Դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Դատական պրակտիկայի վերլուծության բաժնում՝ որպես առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

Ձինապարտ է, ամուսնացած, ունի երկու զավակ:

Սարգիս Ռաֆիկի Պետրոսյան

Ծնվել է 1990թ.-ի հունիսի 5-ին, Շիրակի մարզի Արթիկ համայնքում:

2012թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2014թ. ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

16.05.2014-01.02.2016թթ. աշխատել է Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական ապահովման բաժնում՝ որպես առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար, այնուհետև՝ առաջատար մասնագետ:

01.02.2016-27.02.2017թթ. աշխատել է «Օլանդա» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

29.04.2019-25.10.2021թթ. աշխատել է Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ:

25.10.2021թ.-ից մինչ օրս աշխատում է Շիրակի մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

Դատախազությունում պաշտոնավարման ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազի 25.06.2021թ.թիվ 202-Ա հրամանով Սարգիս Պետրոսյանին հայտարարվել է շնորհակալություն և պարգևատրվել է «ՀՀ դատախազություն» կրծքանշանով:

10.03.2022թ. թիվ 62-Ա հրամանով Սարգիս Պետրոսյանի նկատմամբ կիրառվել է նկատողություն տեսակի կարգապահական տույժ, որը ՀՀ գլխավոր դատախազի 29.04.2022թ. թիվ 119-Ա հրամանով ժամկետից շուտ հանվել է:

19.07.2018թ.-ից առ այսօր հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագրի գործողությունը կասեցված):

Ստեփան Ռոբերտի Նավասարդյան

Ծնվել է 1990թ.-ի հուլիսի 25-ին, Երևան քաղաքում:

2006թ.-ին ավարտել է Երևանի թիվ 198 միջնակարգ դպրոցը:

2012թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2009թ.-ին սեփական նախաձեռնությամբ տարկետում է ստացել ուսման վայրից և մեկնել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, ծառայել է ՊՆ թիվ 53159 զորամասում, զորացրվել է 2011թ.:

2015թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

18.02.2013-28.08.2013թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնի 1-ին բաժանմունքում՝ որպես քննիչ:

28.08.2013-07.10.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնի 2-րդ բաժանմունքում՝ որպես քննիչ:

07.10.2014-23.05.2016թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

31.05.2016-01.07.2016թթ. աշխատել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչությունում՝ որպես ՀԿԳ քննիչ:

03.10.2017-05.05.2018թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչաան շրջանների քննչական բաժնում՝ որպես քննիչ:

05.05.2018-08.04.2019թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

08.04.2019-05.08.2020թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում՝ որպես ՀԿԳ քննիչ:

Ստեփան Նավասարդյանի նկատմամբ «խիստ նկատողություն», կամ դրանից ավելի խիստ կարգապահական տույժեր ծառայության ընթացքում չի կիրառվել:

24.05.2019թ. հանդինաում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

Տիգրան Հակոբի Ղազարյան

Ծնվել է 1990թ.-ի ապրիլի 21-ին, ՌԴ Մոսկվա քաղաքում:

2006թ.-ին ավարտել է Արագածոտնի մարզի Ավան գյուղի Աղբյուր Սերոբի անվան միջնակարգ դպրոցը:

2007թ.-ին ընդունվել է Ձեռներեցության միջազգային ակադեմիայի երևանյան մասնաճյուղ և 2012թ.-ին ավարտել է ՌԴ Մոսկվայի Ակադեմիական միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղը: Վերջինիս շնորհվել է դիպլոմավորված մասնագետի որակավորում «իրավագիտություն» մասնագիտությամբ:

2012-2013թթ. պարտադիր զինվորական ծառայություն է անցել Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության թիվ 3500 զորամասում, որտեղից գործուղվել և ծառայությունը շարունակել է ՌԴ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության Բալաշիխայի կայազորի քննչական բաժնում՝ որպես քննիչի օգնական:

25.06.2014-07.10.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնի 1-ին բաժանմունքում՝ որպես քննիչ:

07.10.2014-20.10.2016թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

20.10.2016-05.05.2018թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

05.05.2018-17.10.2018թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում՝ որպես ՀԿԳ քննիչ:

06.05.2019-05.08.2021թթ. և 28.04.2022թ.-ից առ այսօր հանդիսանում է «Էյ Էլ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի տնօրեն:

2018թ.-ից առ այսօր հանդիսանում է Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ:

2019թ. սեպտեմբեր ամսից մինչև 2020թ. մարտ ամիսը հանդիսացել է Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն հիմնադրամի ծրագրերի ղեկավար:

2020թ. դեկտեմբերի 6-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

ա2016թ. հուլիսին ՀՀ Արդարադատության ակադեմիայում անցել է վերապատրաստում՝ ՀՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի հիմնահարցերով:

ՀՀ ՔԿ նախագահի կողմից պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար» չորրորդ աստիճանի մեդալով, շնորհակալագրով:

Արտակարգ իրավիճակների նախարարի կողմից պարգևատրվել է պատվոգրով:

Ամուսնացած է: